ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

25.11.16թ. N 02/20/6211-16

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության նախագահ
տիկին Լիանա ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

2016 թվականի նոյեմբերի 21-ի
N 311-ի 5 գրություն

Հարգելի տիկին Դոյդոյան

Տեղեկատվության ազատության ոլորտում պետական մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, հասանելիության ապահովման և տեղեկություններ փնտրող անձանց օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում հավաստի և ամբողջական տեղեկություն տրամադրելու համար ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի նոյեմբերի 3-ի N279 հրամանով տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հասմիկ Պետրոսյանը (Հեռ. 011-621-711, էլ. փոստ՝ info@minurban.am):

Վերոնշյալ հրամանը տեղադրված է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի (ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N1111-Ն որոշմամբ հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության նախարարության իրավահաջորդը) պաշտոնական՝ www.minurban.am կայքի «Օրենսդրություն» բաժնի «ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի հրամաններ» ենթաբաժնում (http://mud.am/lows/files/9550.pdf):

Միաժամանակ հայտնում եմ, որ պատասխանատու պաշտոնատար անձի կոնտակտային տվյալները ևս տեղադրված են Կոմիտեի պաշտոնական կայքում:

Հարգանքով՝

Արամ ՄԿՐՏՉՅԱՆ

Տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին
Հասմիկ Պետրոսյան
Հեռ. 011-621-711